

ընկնում է Մռութիւն մօտ, այժմեան նահատակի տեղը, ուր վրայ են հասնում թուրքերը և նահատակում:

ԿԱԽԱՐԴԻՈՒԹԻՒՆ

Կարկտագիր. — Կախարդութեամբ պարապող մարդիկ կանցատ զիւղերում, բայց բոլորից նշանաւոր համարւում է բանացեցի Գրբաց Ակորը: Սա ունի մի քանի ձեռագիր Սողոմոնի, Ալեքսանդրակ, Հաւախոս և այլ գրքեր, որոնց օգնութեամբ կարողանում է գուշակութիւններ անել, կորուստներ գտնել, զողի տեղն լմանալ, մինի սէրը գրաւել, սիրահարներին զբժտեցնել միմեանցից և այլն Բայց ալս բոլորը անում են և միւս զբացները, բանանցեցի Յակորի փառքը կարանում է նըրանում, որ նա միայն կարող է կապել երկինքը կարկտից, աղատել գիւղացու ապրուստի միակ միջոցը կարկտի աւերիչ հարտածներից: Եւ այս հետևեալ միջոցով.

Համբարձման օրը միւս մատաղների հետ մորթում են և մի չալ այծ, որի արիւնով ինքը Յակորը գրում է թղթի վրայ հետևեալը. «Միծ և երաշնորհ, Տեառն մեր տէրն Յիսուս Քրիստոս լորժամ երթայր իերուսաղէմ, Հարցին ցնա աշակերտքն. «ինչ արասցուք, լորժամ գայ ամպ կարկտից:» Պատախանի ետ նոցա տէրն մեր Յիսուս Քրիստոս. «ասացէք Առառի Մաստիք դէժ-դէժ»:

Ահա այս գրուածը ոլորում, անց է կացնում եղեգնի կամ մի ծակ փախտի մէջ, երկու ծայրը ամբացնում և տանում արտի կամ ազըու մօտ մի բարձր տեղ տնկում: Ահա այս աղօթքը թույլ չի տալիս, որ կարկուտը ալդ տեղին խփի: Բանանցի, սրա շրջակալի և նոյնիսկ Թանձակի շատ արտերն ու ալգիները ամէն տարի այսպէս ապահովագրուում են: Եւ որովհետեւ ապահովագրողների թիւը չափազանց մեծ է և Գրբաց Յակորը ամենի համար չի կարողանում ինքը գրել, ուստի թույլ է տալիս, որ ուրիշներ արտազրեն այդ աղօթքը. միայն որպէսզի զա իւր զօրութիւնը չկորցնի՝ պահանջում է որ տառ առ տառ արտագրեն, առանց իմաստն ըմբռնելու:

Գարի ցկել.—Մեծ մասամբ գարի ցկողները կանայք են լինում: Նրանք այս միջոցով գուցակում են, թէ հիւանդութիւնը որ տուրբն է տուել, թէ կորած իրը ուր է կամ ում մօտն է, թէ մտադրուած խորհուրդը կըկատարուի թէ ոչ:

Խւրաքանչիւր գարի ցկող ունի երեք գարի. որոնցից մինը արծաթապատ է, և կամ երկու ցորեն և մի գարի: Նա սրանց պահում է մի մետաքսեալ թաշկինակի մէջ մեծ յարգանքով, որոշեալ սրբութիւն վերագրելով նրանց:

Գարի ցկելիս թաշկինակը փաթթում է ձախ ձեռին, գարիները դնում այդ ձեռի ափին, նշանակում թէ այս գարին այս ինչ սուրբը կամ այս ինչ մարդն է նշանակում. ապա աջ ձեռը դնում է ձախի վրայ, Ցիսուս Քրիստոս ասելով երեք անգամ թափ տալիս, աջ ձեռքը վերցնում և նայում, թէ արծաթապատ գարին կամ ցորենը որ գարու մօտ է ընկել, նրանից էլ յառաջացել է հիւանդութիւնը և կամ նրա մօտ է գտնուում կորուստը:

Գարի ցկողը մեռնելիս գարիները տալիս է իւր ամենասիրելիին և այնուհետև այս վերջինն է շարունակում գուշակութիւններ անել, ոտանալով նրա օրհնութեան հետ և նրա ունեցած շնորհքը:

Վիճակի ջրով ևս գուշակութիւններ են անում այսպէս. Համբարձման վիճակը հանելուց յետոյ վիճակի ջուրը ածում են մի ռետոն (գաւաթ) մէջ և երկու բութ մատերը միմեանց յենած երկու ցուցամատով ըռնում են զաւաթը և սկսում սրբերի անուններ տալ. որի անունը տալիս զաւաթը դէպի աջ պտտուի, նրանից է առաջացել հիւանդութիւնը կամ անյաջողութիւնը. իսկ եթէ ձախ պտտուի՝ նրանից չէ:

Մի քանի տեղեր երկու մարդ են ըռնում զաւաթը իրենց բութ մատերով, իսկ քաղաքում միմիսյն մի մարդ՝ երկու բըթով, միւս մատերը ծածկած:

Խաչ ֆցի.—Որպէսզի գուշակեն, թէ անելիք ճանապարհորդութիւնը լաւ թէ վատ հետևանք պիտի ունենալ, գնում են Խաչակապ գիւղի մօտ գտնուած Խաչ-չյի մատուռը*), 5—10

* Այս մատուռը նոր են կառուցել այն խաչքարի վրայ, որ ընկած էր մի հինաւուրց, փոտած կաղնուու տակ:

մանրիկ քարեր վերցնում և բոլորը միստին ձգում մատուռի մէջ զտնուած միակ խաչքարի վրալ. եթէ քարերը խաչաձե դասաւորուեցին, ասել է՝ թէ ճանապարհորդութիւնը «բարի» է, խակ եթէ ոչ՝ «չար», պէտք է յետ կենալ: Եւ շատ շատերն ալլեւ չեն շարունակում ճանապարհը՝ եթէ «բարի» չի դալիս: Ուրիշներ և մանաւանդ կանալք նոյն կերպ գուշակում են թէ իրենց իղձերը կատարուելու են թէ ոչ:

Թիր-կապ.—Երբ մի անասուն է կորչում, զիշ-կապ անող պառաւներին խնդրում են գալլերի բերանները կապել, որպէսզի կորած անասունին չուտեն: Սրանք էլ կամ թել են վերցնում, մատի վերալ փաթաթում և հանգուստում և կամ մի դրչահատ, բերանը բացանում և ապա փակում և ալդպէս պահում: Այս երկու դէպքումն էլ ասում են հետևեալ աղօթքը.

Գիլ անեմ, զիլ կապ անեմ.

Կոքներդ*) մո-մայ անեմ.

Ոտներդ խոզանի անեմ.

Աչքելոդ կծորի **) անեմ:

Մինի սէրը գրաւելու համար.—Նրա շորերի մէջ յոպ-յոպի իւղ են գցում, շորերի բանքակի հետ բորենու մազ դնում***):

Ամուսիններն միմեանցից գժտեցնելու նպատակով գողանում են կնոջ մազերից և երեք անգամ հանգուստում և ալդպէս պահում: Երբ կամենում են, որ հաշտուին, հանգուստը արձակում են:

Խաչի դուլ.—Միքանի սրբավայրերում կան սաստիկ ջրդալին և կրօնասէր կանալք կամ տղամարդիկ: որոնք իրենց խռչէ ռուլ (ծառայ) են կոչում. սրանք աւելում մաքրում են այդ սրբատեղիները, օգտուում նրանց եկամուտներից, և ուխտաւորներ եկած ժամանակ ուշաթափւում (շատում) և գուշակութիւններ անում Սրանք միքանի համախոհ կանալք են ունենում, որոնք օգնում են ուխտաւորներին կերակուր եփելիս և

*) Ատամներ.

**) Լուսատակի: Կարծում են թէ լուսատակի աչքերը չափազանց փոքր են և իրենից արձակուող լուսից շլացած՝ ոլինչ չեն անսում:

***) Մամիկոնեան. Զհասութիւն. եր. 127.

Նրանցից տեղեկանում նրանց դրութեան և ուխտի մասին։ Ապա այս բոլորը հաղորդում են խաչի դուլին։ Սա յարմար բովէին յանկարծ վայր է ընկնում, ձեռներն ու ոտները խփում գետնին, ուշաթափում, ձեռներով ծեծում կուրծքը, անկապ խօսքեր ասում և ապա հետզհետէ հանդարտում։ Այս ժամանակ ով ուզում է գուշակել տալ, բռնում է նրա ձախ ճկոյթ մատից։ Խաչի դուլը կիսաբաց աչքերով նայում է դրան և կցկը-սուր ձախով ասում։

Կաղնի-խաչ, ես քե մատաղ,

Կաղնի-խաչ, ես քու լիս երեսին մատաղ.

Կաղնի-խաչ, ես քու ցաւն ու չոռը տանեմ.

Կաղնի-խաչ, ես քու ոտի տակի հողն եմ.

Կաղնի-խաչ, ես քու դարավաշը, քու ծառան եմ։

Ցեսոյ մելամաղձոտ ձայնով երգում է։

Քու ցաւերին կանեն դարման,

Քիր ու ախպեր Կաղնի խաչը.

Չոք-չոք գնա նրանց տակը,

Նրեսիդ քսիր նրանց քարերը.

Գնա սիրով ու հաւատով

Թամուզ ու պայծառ սրտով.

Նրանք քեզնից շամբիր կուզեն,

Անծին աշառ ու մատաղ կուզեն։

Պատգամ հարցնողը լարուած ուշադրութեամբ, շատ անգամ արցունքն աչքերին լսում է և կատարում ասածները։

Արավիսի խաչի դուլերից հռչակ են հանել Կիրանց գիւղի մօտ գտնուած վերոյիշեալ Կաղնի-խաչի դուլ՝ Բանանցեցի Նաղունց Թանգի աքերը և Գետաշէնի ս. Նշանի-դուլ Ակոփը, որ նոյն իսկ մատուան իմտեռումն է թաղուել։ Սա երկար տարիներ շահագործել է ս. Նշանի մատուուը և խարել ժողովրդին, մինչև անգամ հերթիկներից ներս ցատքելով։ ուր նախապէս ծածուկ վերմակներ են բռնած եղել, որպէսզի ալդ բարձրութիւնից թռչելիս ոտներն չկոտրուին։